



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

21.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ՍՑ-92/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննորդանաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.11.2016թ. թիվ 03/73-3/26304-16 և 19.12.2016թ. թիվ 03/73-3/28055-16 գրություններով ներկայացված «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09809097) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-92/16 բողոք) և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.06.2016թ. թիվ ԴՎԱ/1758 և 11.01.2017թ. թիվ ԴՎԱ/12, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 24.11.2016թ. թիվ 09/2407, «Հայատոմ» ՓԲԸ-ի 30.11.2016թ. թիվ 289, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 14.12.2016թ. թիվ 40-2548 գրությունների և դրանց կից ներկայացված փաստաթղթերի պատճենների հիման վրա, համապատասխանաբար՝ 30.06.2016թ. թիվ 1/73-3/17455-16, 19.01.2017թ. թիվ 03/73-3/629-17, 19.12.2016թ. թիվ 03/73-3/28155-16, 02.12.2016թ. թիվ 03/73-1/26855-16, 19.12.2016թ. թիվ 03/73-1/28054-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ)

ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 07.11.2016թ. թիվ 01/04.1/4019-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 30.06.2016թ. թիվ 1/73-3/17455-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից **մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակցի ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտի ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.11.2016թ. թիվ 03/73-3/26304-16 19.12.2016թ. թիվ 03/73-3/28055-16 գրություններով Կենտրոնին հայտնել է, որ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՁ ՇՀԱՊՁԲ-16/12/2/ԱԲ/ՄԲ», Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԱՊՇ ՄԱՊՁԲ-16/5» և ՀՀ առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-1-2016» ծածկագրերով ընթացակարգերին մասնակցության հայտեր է ներկայացրել համապատասխանաբար՝ 26.10.2016թ., 26.07.2016թ. և 30.11.2016թ., ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին ներառելու գործընթաց:

2. «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը կարծիք ստանալու նպատակով 13.07.2016թ. թիվ 01/04.1/2683-16, 05.12.2016թ. թիվ 01/04.1/4412-16, 20.12.2016թ. թիվ 01/04.1/4650-16, 21.12.2016թ. թիվ 01/04.1/4663-16 գրություններով դիմել է «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին, սակայն պատասխան չի ստացվել:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 24.06.2016թ. թիվ ԴՎԱ/1758 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ Պատվիրատու 1-ի կողմից մարզական գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-33/1» ծածկագրով բաց ընթացակարգ մասնակից «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը թերի էին, մասնավորապես բացակայում էր նմանատիպ պայմանագիրը: Հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մասնակցի առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է, որ սահմանված ժամկետում (20.06.2016թ.) «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն ներկայացրել է նմանատիպ պայմանագիր, որը կնքված է եղել 23.06.2016թ., այնինչ 20.06.2016թ. դրությամբ հնարավոր չէր ունենալ նմանատիպ պայմանագիր կնքված 23.06.2016թ.-ին, արդյունքում Ընկերության հայտը մերժվել է:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.01.2017թ. թիվ ԴՎԱ/12 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ Պատվիրատու 1-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-23/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ կատարած հարցմանն պատասխան, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ:

4. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 24.11.2016թ. թիվ 09/2407 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է, որ Պատվիրատու 2-ի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/12-8-2016(ԵՊԲՀ)» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 311 084 ՀՀ դրամի չափով:

5. «Հայատոմ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Հայատոմ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 3) 30.11.2016թ. թիվ 289 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 483 330 ՀՀ դրամի չափով:

6. ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 4) 14.12.2016թ. թիվ 40-2548 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ Պատվիրատու 4-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-3» ծածկագրով ընթացակարգի մասնակից «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն ներկայացրել է կեղծ տվյալ:

7. ՍՑ-ԳԲԽ-92/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 25.11.2016թ. թիվ 03/73-3/26304-16 և 19.12.2016թ. թիվ 03/73-3/28055-16 գրություններով ներկայացված «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մարզական գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-33/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ).

- Ընթացակարգին մասնակցելու նպատակով **02.06.2016թ.** հայտ է ներկայացրել «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է մարզական գույքի մատակարարում, որի ընդհանուր արժեքը կազմել է 2 912 919 ՀՀ դրամ պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.06.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1.1 կետով հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, բացակայում է նմանատիպ պայմանագիրը, որոշել է կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունը:

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.06.2016թ. տեղի ունեցած նիստով շարունակելով որակավորման չափանիշների գնահատումը, պարզել է, որ սահմանված ժամկետում (20.06.2016թ.) «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի ներկայացրած նմանատիպ պայմանագիրը կնքված է եղել 23.06.2016թ., իսկ հանձնման-ընդունման արձանագրությունը և հարկային հաշիվը կնքված է եղել 26.06.2013թ., ուստի որոշել է մերժել Ընկերության հայտը՝ կեղծ տվյալ ներկայացնելու պատճառով:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-23/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ).

- Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով **08.11.2016թ.** հայտ է ներկայացրել «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր

տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (08.11.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 21.11.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.2-րդ կետով որոշել է Ընթացակարգ 1-ի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնելու հրավերով նախատեսված որակավորման չափանիշների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

- Պատվիրատու 1-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 21.11.2016թ. կատարած հարցմամբ, խնդրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին տրամադրել տեղեկատվություն «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատու 1-ին 23.11.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն 2016թ. նոյեմբերի 8-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **311 470 ՀՀ դրամի** չափով:

- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 28.11.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետով հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը՝ որոշել է մերժել «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի հայտը, միաժամանակ նշել է, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»

հիմնադրամի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/12-8-2016(ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կադարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2).

- Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով **07.11.2016թ.** հայտ է ներկայացրել «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր

տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (07.11.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 2-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ, խնդրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին տրամադրել տեղեկատվություն «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն 2016թ. նոյեմբերի 7-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **311 084 ՀՀ դրամի չափով**:

- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 15.11.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով որոշել է «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, համաձայն որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

4. «Հայտարարում» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1»

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգ (այսուհետք նաև՝ Ընթացակարգ 3).

- Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով **21.11.2016թ.** հայտ է ներկայացրել «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (21.11.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 3-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ, խնդրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին տրամադրել տեղեկատվություն «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Պատվիրատու 3-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն 2016թ. նոյեմբերի 21-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **483 330 ՀՀ դրամի** չափով:

- Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովի կողմից 29.11.2016թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշվել է 1-ին չափաբաժնու 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից տրամադրված եզրակացությունը:

5. ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետք նաև՝ Ընթացակարգ 4).

- Ընթացակարգ 4-ին մասնակցելու նպատակով **05.12.2016թ.** հայտ է ներկայացրել «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգ 4-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (05.12.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Պատվիրատու 4-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմամբ, խնդրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին տրամադրել տեղեկատվություն «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն 2016թ. դեկտեմբերի 5-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ **488 996 ՀՀ դրամի** չափով:

- Ընթացակարգ 4-ի գնահատող հանձնաժողովի կողմից 12.12.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով որոշվել է «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից տրամադրված եզրակացությունը:

8. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **ավելի քան մեկ անգամ խախտել է** պայմանագրով նախատեսված կապիտալ ծախսերի **գնման գործընթացի շրջանակում սրանձնած պարտավորություն**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում **ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցն հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարող հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում

մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալիս օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում **հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:**

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ **չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:**

Կարգի 124-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին.

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և պահանջում նախաձեռնել

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ **6 ամիս ժամկետով**, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Այսպիսով, ՀՀ **պաշտպանության նախարարության** կողմից մարզական գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-33/1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն **02.06.2016թ.** ներկայացրած հայտի N 3.1 հավելվածով՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ Ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է մարզական գույքի մատակարարում, որի ընդհանուր արժեքը կազմել է 2 912 919 ՀՀ դրամ և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.06.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 1.1 կետով հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, բացակայում է

նմանատիպ պայմանագիրը, որոշել է կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունը:

«Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում (20.06.2016թ.) ներկայացվել է նմանատիպ պայմանագիրը, որը սակայն կնքված է եղել 23.06.2016թ. իսկ հանձնման-ընդունման արձանագրությունը և հարկային հաշիվը կնքված են եղել 26.06.2016թ., ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է՝ կեղծ տվյալ ներկայացնելու պատճառաբանությամբ:

Խորհուրդը գտնում է, որ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի կողմից **02.06.2016թ.** հայտի N 3.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Այնուհետև, Ընկերությունը **հայտերի N 2 հավելվածներով** Ընթացակարգեր՝ 1-ին, 2-ին, 3-ին և 4-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություններով, հայտնել և հավաստել է, որ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ (07.11.2016թ., 08.11.2016թ., 21.11.2016թ., 05.12.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, «Հայաբոմ» ՓԲԸ-ն, ՀՀ «Հայկական արոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին համապատասխանաբար՝ **21.11.2016թ. 10.11.2016թ., 23.11.2016թ., 08.12.2016թ.** կատարած հարցմամբ, խնդրել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին տրամադրել տեղեկատվություն «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի վերաբերյալ, ի պատասխան որոնց՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց՝ Ընկերությունն ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ **հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ համապատասխանաբար՝ 08.11.2016թ.-ի դրությամբ՝ 31 470 ՀՀ դրամի չափով, 07.11.2016թ.-ի դրությամբ՝ 311 084 ՀՀ դրամի չափով, 21.11.2016թ.-ի դրությամբ՝ 483 330 ՀՀ դրամի չափով, 05.12.2016թ.-ի դրությամբ՝ 483 996 ՀՀ դրամի չափով:**

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի կողմից **հայրենի N 2 հավելվածներով** Ընթացակարգեր՝ 1-ին, 2-ին, 3-ին և 4-ին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցությունների համապատասխանության մասին հայտարարությունները ևս հանդիսանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված Ընթացակարգ 1-ի արդյունքում Ընկերության հայտը մերժվել է, քանի որ վերջինս սահմանված ժամկետում հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը չի ներկայացրել՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ստանձնած պարտավորության ընդամենը մեկ խախտում, ինչը բավարար հիմք չէ ՀՀ ֆինանսների նախարարության 19.01.2017թ. թիվ 03/73-3/629-17 գրությամբ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,
- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է Ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը **02.06.2016թ.** մասնակցելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-33/1» ծածկագրով բաց ընթացակարգին ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, ինչպես նաև **07.11.2016թ., 08.11.2016թ., 21.11.2016թ. 05.12.2016թ.** կրկին հայտեր է ներկայացրել համապատասխանաբար՝ «Երևան Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/12-8-2016(ԵՊԲՀ)», ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-23/14», «Հայալուծ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1» և ՀՀ «Հայկական ավոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷ-ՇՀԱՊՁԲ-15/11-3» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին, որոնց շրջանակներում ևս ներկայացրել է կեղծ տվյալ:

Միևնույն ժամանակ, ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.11.2016թ. թիվ 03/73-3/26304-16 և 19.12.2016թ. թիվ 03/73-3/28055-16 գրություններով Կենտրոնին հայտնել է, որ «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՁ ՇՀԱՊՁԲ-16/12/2/ԱԲ/ՄԲ», Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԱՊՀ ՄԱՊՁԲ-16/5» և ՀՀ առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-2016» ծածկագրերով ընթացակարգերին մասնակցության հայտեր է ներկայացրել համապատասխանաբար՝ 26.10.2016թ., 26.07.2016թ. և 30.11.2016թ., ուստի պահանջել նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներ ցուցակում «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին ներառելու գործընթաց:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ հայտ ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթաց շրջանակում «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ն ներկայացրել է կեղծ տվյալ, որը հիմք վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 25.11.2016թ. թիվ 03/73-3/26304-16 և 19.12.2016թ. թիվ 03/73-3/28055-16 գրություններով ներկայացված «Ոստանիկ հայրենյաց» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09809097) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Լուսինե Ոսկանյան

Անդամ՝



Մարիամ Սարգսյան